ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՈՒՄՆԵՐ

ՄԻԽԵԻԼ ԲԱՏԻԱՇՎԻԼԻ. «ՈԼՈՐՏՈՒՄ ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼԻՐ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ըստ Միխեիլ Բատիաշվիլու, արդեն սեպտեմբերից ավելանալու է մանկավարժների աշխատավարձը: Նրա պարզաբանմամբ, դպրոցի բարեփոխման հիմնական սկզբունքներն են. դպրոցի ուժեղացումը, ինքնավարությունը եւ ապակենտրոնացումը, դպրոցի տնօրենը՝ ինչպես լիդեր եւ ստեղծագործող հարցերի վրա կողմնորոշված մանկավարժ:

Նախարարի խոսքով, մանկավարժները պետք է ավելի քիչ ժամանակ ծախսեն թղթաբանության վրա եւ մեծ ժամանակ պետք է ծախսեն ստեղծագործողական աշխատանքների վրա:

Նրա խոսքով, բոլոր ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան հանձնել քննություն եւ բարձրացնել իրենց արհեստավարժությունը:

Միխեիլ Բատիաշվիլին անդրադարձավ նաեւ բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման նոր մոդելին՝ նշելով, որ գործող մոդելը արդյունավետ չէ, նախարարությունը Համաշխարհային բանկի հետ աշխատում է նոր մոդելի վրա, հավելելով, որ հաջորդ տարի նախատեսվում է նաեւ չեղարկել անվճար ֆակուլտետները:

Խորհրդարանականների հետ հանդիպմանը Կրթության եւ գիտության նախարարը պատասխանեց պատգամավորների առաջադրած հարցերին:

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՑՎԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՐ ԴԵՊՔՈՒՄ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՏ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից վերջերս իրականացվող բարեփոխումների շրջանակներում, վերացվել են միջնակարգ կրթության ատեստատի համար անցկացվող ավարտական քննությունները: Նախարարության մեկնաբանությամբ՝ այդ որոշումը կնպաստի ուժեղ, ինքնուրույն դպրոցի կայացման միջոցով ուսման որակի բարձրացմանը: Ստորեւ ներկայացնենք հարցի հետ կապված որոշ պարզաբանումներ:

Ըստ փոփոխության՝ որպեսզի աշակերտը ստանա միջնակարգ կրթության ատեստատ, Ազգային ուսումնական ծրագրով 12-րդ դասարանի համար նախատեսված բոլոր առարկաներից պիտի ունենա դրական գնահատում, 5 կամ 5-ից ավելի միավոր:

Այն աշակերտները, որոնք նախորդ տարիներին կտրվել են ավարտական քննություններից կամ տարբեր պատճառներով չեն ներկայացել քննությանը, կարող են ստանալ ատեստատ, եթե Ազգային ուսումնական ծրագրով 12-րդ դասարանի համար նախատեսված բոլոր առարկաներից ունեն դրական գնահատում, 5 կամ 5-ից ավելի միավոր:

Դասարանի հաղթահարման կամ բացակայությունների պատճառով դրսեկության (էքստեռն) ձեւով քննությունները հաջողությամբ հանձնելու դեպքում, աշակերտները կարող են ստանալ ատեստատ, եթե Ազգային ուսումնական ծրագրով 12-րդ դասարանի համար նախատեսված բոլոր առարկաներից ունեն դրական գնահատում, 5 կամ 5-ից ավելի միավոր:

Ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտներն ու նրանք, ովքեր ձեռք կբերեն միջնակարգ կրթության ատեստատ, 2019 թվականին եւ հետագա տարիներին իրավունք կունենան գրանցվելու ինչպես մասնագիտական, այնպես էլ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար:

Ատեստատներ կտրամադրվեն Ծառայությունների զարգացման գործակալության կողմից՝ Օրենքում համապատասխան փոփոխությունների գործարկումից հետո: Այդ մասին ավելի մանրամասն տեղեկություններ կհրատարակվեն մի փոքր ուշ:

Ընթացիկ տարվա դիմորդներին մեկ անգամ եւս հիշեցնենք, որ Միասնական ազգային քննությունների ձեւաչափում 2018-2019 ուսումնական տարվա համար փոփոխություններ չեն նախատեսվում: Փոխվում է միայն այն կարգը, որով երկու կամ ավելի ընտրովի առարկա հանձնելու դեպքում, դրանցից մեկից կտրվելու կամ չներկայանալու պարագայում, դիմորդը կորցնում է դրամաշնորհ ստանալու հնարավորությունը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ, ԹԵՐԵԶԱ

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ախալքալաքիի մունիցիպալիտետի մի շարք հանրային դպրոցների կոլեկտիվների կողմից թերթի խմբագրությանը հղած, մունիցիպալիտետի հանրակրթական ռեսուրսկենտրոնի ղեկավար Թերեզա Չիվչյանի ծննդյան տարեդարձին նվիրված նամակը:

Մի առիթով Մեծն Թումանյանն ասել է. «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի եւ կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ»:

Ասվածը, հիրավի, հարիր է Ախալքալաքիի ռեսուրսկենտրոնի պետ Թերեզա Չիվչյանին: Իր գործին նվիրված մի անձնավորության, որն ունի վեհ գաղափարներ եւ օժտված է առաքինի հատկանիշներով՝ մարդասեր է, ազնիվ, անկողմնակալ, պահանջկոտ, ունի նուրբ, քնքուշ սիրտ եւ իր մարդկային հմայքով՝ արժանի բանաստեղծի պատկերավոր տողերին.

«Ինչքա՜ն գեղեցիկ, ինչքան չքնաղ է Աղջիկն այս քնքուշ՝ Տիրամոր տեսքով,
Հանց ծագող արեւ՝ դեմքը շարմաղ է,
Շողը փեշին է՝ վարար լույսերով...»:

Ախալքալաքիի հանրային դպրոցների տնօրենները գեղեցիկ անակնկալ նվիրեցին Թերեզային. իր ծննդյան օրվա առթիվ կազմակերպեցին երեկույթ՝ մաղթելով նրան անսահման սեր, անսպառ երջանկություն, բեղմնավոր աշխատանք եւ նորանոր բարձունքներ... Ծնունդդ շնորհավոր, մեր սիրելի Թերեզա...

«Վրաստան» թերթը միանում է այդ շնորհավորանքներին եւ ընդգծում, որ Ձեր շնորհիվ, Թերեզա, բարի մարդկային հատկանիշների, հանդուրժող բնավորությանը եւ, իհարկե, ստեղծագործական մտքի, Ձեր գործունեության երեք տարիների ընթացքում, կարողացաք արժանանալ մունիցիպալիտետի դպրոցների կոլեկտիվների, աշակերտների եւ ծնողների սիրոն ու հարգանքին: Ցանկանում ենք նորանոր հաջողություններ Ձեր շնորհակալ աշխատանքում, առողջություն եւ անձնական երջանկություն:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՈՒԶՈՒՄ ԵՔ ՀԱՎԱՏԱՑԵՔ, ՈՒԶՈՒՄ ԵՔ՝ ՈՉ, ԲԱՅՑ ՊԱՐԸ ԱՄԵՆ ԲԱՐԻ ԳՈՐԾԻ ՍԿԻԶԲ Է»

***Ինչպե՞ս վարվել. ո՞րն է ճիշտը՝ մասնագիտություն ընտրել կյանքի՞ պահանջով, թե՞ սրտի թելադրանքով... Մարտահրավերներով լի մեր օրերում շատ դպրոցավարտների ծանոթ այս երկընտրանքը չշրջանցեց նաեւ Անգելինա Նազարյանին, երբ նա, Թբիլիսիի «Մետրոստրոյ» կոչվող թաղամասում, թիվ 110 դպրոցն ավարտելուց հետո, կանգնեց մեծ կյանքի շեմին: Անգելինան լռելյայն լսեց ծնողների, մերձավորների խորհուրդները եւ մի գեղեցիկ առավոտ արթնացավ նրանց զարմացնող, հաստատ վճիռով... «Ձնեղացնելով» ո՛չ կյանքին, ո՛չ սրտին՝ որոշեց միաժամանակ ձեռք բերել երկու մասնագիտություն՝ ատամնաբույժի եւ պարուսույցի: Սրտի ձայնով դարձավ Գյումրիի «Աղասի Շաբոյանի անվան» պարարվեստի ուսումնարանի հեռակա բաժնի ուսանող, իսկ կյանքի թելադրանքով ընդունվեց Թբիլիսիի «Vita» բժշկական համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետը:*

Այսօր, Թբիլիսիի թիվ 98 եւ 103 դպրոցներին կից, մայրաքաղաքում եւ երկրում քաջածանոթ, «Անի» մանկա-պատանեկան պարային համույթի ղեկավար Անգելինա Նազարյանը մեր հյուրն է:

- Լավ գիտենալով Ձեր կենսագրությունը՝ անհնար է չասել, որ ժամանակին կայացրել եք համարձակ որոշում՝ նախընտրությունը տալով պարարվեստին ա'յն պարագայում, երբ ատամնաբույժի գործն ավելի եկամտաբեր է...

- Գուցե ջահելությունս էր համարձակություն տվողը. բայց ինձ զարմանալիորեն չվախեցրեց երկու տարբեր ոլորտների մասնագիտություններ ընտրելը: Ես խորհուրդ կտայի երիտասարդներին՝ օգտագործել երիտասարդության ոսկե շրջանը, նրանով իրենց տրված ներքին բոլոր ռեսուրսները եւ ձեռք բերել մի քանի մասնագիտություն, ինչը կյանքի մարտահրավերներին առանց տագնապի նայելու եւ դրանց դիմագրավելու հզոր գրավական է: Ինչ վերաբերում է անեկամտաբեր պարարվեստն ընտրելուն, ապա, գիտենք բոլորս, որ սրտի ձայնը չես լռեցնի...

- Անգելինա, «Անի» համույթն այսօր ակտիվ մասնակիցն է մայրաքաղաքի եւ, իհարկե, վիրահայ մշակութային կյանքի, երեւի դա միանգամից չի տրվում...

- Այո, «Անին» որոշակի ճանապարհ է անցել. պարախումբը հիմնադրվեց 2005-ին, եւ շուտով կլրանա «Անի» համույթի գոյության 15-ամյակը: Այդ երկար տարիները փաստեցին մի ճշմարտություն. երբ բարի է նպատակը, հաջողությունը չի շրջանցում, չի դավաճանում քեզ: Պարուսույց դառնալու եւ ազգային պարը տարածելու գաղափարը ինձ հանգիստ չէր տալիս այն պահից, երբ, Երեւանում՝ Համահայկական խաղեր նախագծին՝ Թբիլիսիի հավաքականի բասկետբոլի թիմի կազմում մասնակցելիս, պատահաբար, դիտեցի հեռավոր սփյուռքից ժամանած պարային համույթների ելույթները: Ես նախանձով էի նայում նրանց. այնքան սեր, ազգային ավանդույթների հանդեպ հարգանք, եթե ուզում եք՝ նաեւ հայրենասիրություն կար նրանց պարում: Հասկացա, որ պարն էլ կարող է դառնալ ազգապահպանության արժանապատիվ ճանապարհ եւ հիմա, արդեն տասնյակ տարուց ավելի, փորձում եմ՝ նաեւ իմ գործով ծառայել այդ նպատակին: Ասեմ, որ, ի սկզբանե յոթ հոգանոց «Անի» պարախումբը, այսօր հասել է հիսունհինգ տարբեր տարիքի անդամ ունեցող համույթի:

- Արվեստն ինչ-որ տեղ մրցակցություն է, ունեցե՞լ եք նման զգացում, չէ՞ որ ձեր կողքին կան Վրաստանի շրջաններում եւ կոնկրետ Թբիլիսում գործող բազում պարային համույթներ, հենց մեր, հայկական «Ձեյրանը», «Վանքը», «Տարոնը»...

- Ոչ, երբեք չեմ մտածել ու երբեւիցե չեմ մտածի իմ գործով ու արածով ինչ-որ մեկի հետ մրցելու մասին, թեկուզ նրա համար, որ այդ հոգեբանությունը կխանգարի աճի ու զարգացման պրոցեսին: Ամեն պարախումբ, իմ կարծիքով, ունի իր ոճը, իր կարգավիճակը, նա պետք է ամբողջանա ինքն իրենով: Այդպես էլ «Անի» համույթը. նրա պարերը հեղինակային են՝ կառուցված, առաջին հերթին, հայկական երաժշտության, հայկական պարարվեստին բնորոշ շարժումների հիմքով: Մեր խաղացանկում կան նաեւ վրացական, հունական, ասորական, քրդական... պարեր:

- Գոյության 14 տարիների ընթացքում ո՞րն եք համարում «Անի»-ի ամենամեծ հաջողությունը եւ՝ խաղացանկում նոր պարեր կունենա՞ք:

- Համոզված եմ, որ ամենամեծ հաջողությունը դեռ առջեւում է... Իսկ ընդհանրապես մեծ ձեռքբերումներ, ինչպես շատերն են ասում, ունեցել ենք եւ մեծ ստիմուլ ենք ստացել թե' Վրաստանում, թե' Հայաստանում, թե' Բուլղարիայում ունեցած հյուրախաղերից... 2016-ին, պարոնոր Վան Բայբուրթյանի եւ գործարար Սամվել Աղեկյանի աջակցությամբ, համույթը մասնակցեց Բուլղարիայի Վառնա եւ Ոսկի ավազներ քաղաքներում անցկացվող միջազգային «Բալկան ֆոլկ» (Բալկանյան ֆոլկլոր) փառատոնին: Նույն թվականին մասնակցեցինք Թբիլիսիի «Ֆիստալոնիա-Ջորջիա» փառատոնին, ուր նվաճեցինք երկրորդ մրցանակային տեղը: Մշտապես մրցանակներով ենք վերադարձել՝ հայաստանյան մշակութային տարբեր փառատոների, նախագծերի մասնակցելիս: Իսկ հիմա պատրաստում ենք հայ ազգագրական ու ժողովրդական պարերի շարան եւ՝ վրացական «Աջարուլի», «Քարթուլի», «Կինտոներ» պարերը:

- Ցանկանում ենք Ձեզ անձնական եւ ստեղծագործական նոր հաջողություններ:

Զրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԴԻՄԱՎՈՐԵՑԻՆ... ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ

Լսել եմ, որ արեւելյան օրացույցով Նոր տարին դիմավորում են ոչ թե հունվարի 1-ին, այլ փետրվարի՝ այդ օրացույցով սահմանված օրը: Հետաքրքիր է, 2019-ը, ըստ արեւելյան օրացույցի, երբ է մուտք գործելու:

Վ.Մուրադյան

Ախալցիխե

Փետրվարի 5-ի լույս գիշերը Չինաստանի բնակիչները, առյուծների ավանդական պարերով, տոնավաճառներով եւ թատերականացված բեմադրություններով, դիմավորեցին լուսնային տոմարով Նոր տարին (Չունցե, Գարնան տոն): Դեղին հողաբնակ խոզից ակնկալում են բարեկեցություն, հարստություն եւ բարգավաճում:

Ավանդաբար ամենաընդգրկուն եւ դիտարժան միջոցառումները կայացել են Չինաստանի մայրաքաղաքի հյուսիսում գտնվող Երկրի տաճարում: Փետրվարի 5-ի վաղ առավոտյան արտիստները կատարել են վառ եւ ազդու «առյուծների պարը», որն սկիզբ է առնում XIV-XVI դարերի Չունցզեի ժամանակներից եւ կոչված է՝ վախեցնելու բոլոր չար ուժերին: Երկրի տաճարում նաեւ տեղի է ունենում հռչակավոր, Պեկինում ամենամեծ, ամանորյա տոնավաճառը, որտեղ կարելի է գնել ձեռքագործ զանազան հուշանվերներ եւ համտեսել Չինաստանի՝ գործնականում բոլոր նահանգների կերակուրները: Չինաստանում համարվում է, որ Ամանորի առաջին հինգ օրերը նախատեսված են հանդիպումների համար: Ազգականները, ընկերները, համադասարանցիները, ծառայակիցներն այցելում եւ շնորհավորում են միմյանց, տալիս նվերներ: Ամանորյա տոնակատարությունները կավարտվեն Լապտերների տոնից (Յանսյացզե կամ Դենցզե) հետո՝ լուսնի տոմարով առաջին ամսի 15-րդ օրը: Չինաստանում պաշտոնական ամանորյա տոները կտեւեն մինչեւ փետրվարի 10-ը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՂՐԱՆՔԻ ՁՈՒՐ Է ԴԱՌՆՈՒՄ

Վերջին ժամանակներում շատ են գրում ու խոսում դպրոցներում տիրող բարքերի, երեխաների նկատմամբ բռնության ու ծաղրանքի փաստերի մասին: Հավանաբար, նման հակոտնյա երեւույթները բնորոշ են նաեւ մյուս երկրների կրթօջաշխներին: Այդ ուղղությամբ ուսումնասիրություններ արվե՞լ են եւ, եթե այո, ապա ի՞նչ արդյունքների են հանգել:

Հ.Ստեփանյան

Թբիլիսի

Աշխարհում յուրաքանչյուր երրորդ դպրոցականը հոգեբանական եւ ֆիզիկական բռնության է ենթարկվում ամսական թեկուզեւ մեկ անգամ: Այդ մասին ասված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ այս խնդրին նվիրված զեկույցում:

«Աշակերտների գրեթե մեկ երրորդը՝ 32 տոկոսը, դպրոցում հասակակիցների ծաղր ու ծանակին է ենթարկվում ամսական գոնե մեկ անգամ»,- ասված է փաստաթղթում, որը պատրաստվել է աշխարհի 144 երկրներից ստացված տվյալների հիման վրա:

Զեկույցի տվյալներով՝ «բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Եվրոպայի եւ Հյուսիսային Ամերիկայի, ֆիզիկական ծանակը ծաղրանքներից առավել տարածվածն է, իսկ սեռական ծանակը՝ տարածվածությամբ երկրորդ տեսակը»:

Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում հոգեբանական ծաղրանքներն առավել տարածվածներն են, իսկ կիբեռբուլինգի (ծաղրանքներ սոցիալական ցանցերի եւ ամբողջությամբ վերցված համացանցի միջոցով) է ենթարկվում առնվազն յուրաքանչյուր տասներորդ դպրոցական: Նշվում է, որ աշակերտների ավելի քան մեկ երրորդը (36 տոկոս) մասնակցում է ծեծկռտոցների, գրեթե յուրաքանչյուր երրորդը (32,4 տոկոս) 2018 թվականին, թեկուզեւ մեկ անգամ, ենթարկվել է ֆիզիկական հարձակման: ՅՈՒՆԵՍԿՕ-ն հիշեցնում է, որ «մարմնական պատիժները, որոնք ֆիզիկական բռնության ձեւերից մեկն են, առաջվա պես թույլատրված են 68 երկրում եւ հաճախակի են կիրառվում այդ երկրներից շատերում»:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ԵՐԵԽԱՆ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ Է. Ի՞ՆՉ ԱՆԵԼ

ՄԱԿ Մանկական հիմնադրամի հաշվետվությունը

ՄԱԿ Մանկական հիմնադրամի՝ «Երեխաների վիճակն աշխարհում. երեխաները թվային աշխարհում» հաշվետվության համաձայն՝ համացանցի յուրաքանչյուր երրորդ օգտատերը երեխա է, եւ թվային աշխարհի վտանգներից նրան չեն կարող հարկ եղած չափով պաշտպանել ո՛չ պետությունը, ո՛չ հարազատ ընտանիքը:

Ինչպե՞ս են թվային տեխնոլոգիաները փոխել երեխաների կյանքը, եւ այդ կապակցությամբ ի՞նչ է մեզ սպասվում ապագայում:

Երեխաները այփաղով զբաղվում են թբիլիսյան բակերից մեկում:

Թվեր եւ վիճակագրություն

* Համացանցի յուրաքանչյուր երրորդ օգտատերը երեխա է:

* 15-24 տարեկան տարիքային խումբը համացանցում ամենաակտիվն է:

* Այդ տարիքային խմբի 71 տոկոսն ակտիվ օգտատերեր են այն դեպքում, երբ աշխարհի ամբողջ բնակչության համար այդ ցուցանիշը կազմում է 48 տոկոս:

* Ընդ որում, երիտասարդության 29%-ի կամ 346 մլն երիտասարդների համար, համացանցն անհասանելի է:

Արդյոք համացանցը վնասակա՞ր է երեխաների համար

Ընդհակառակը: Հաշվետվության հեղինակները համարում են, որ համացանցը պետք է հասանելի լինի բոլոր երեխաներին, քանի որ ժամանակակից աշխարհում համացանցը ուսման, հաղորդակցման եւ ինքնաարտահայտման անսահման հնարավորություններ է պարունակում:

Հաշվետվության համաձայն՝ թվային տեխնոլոգիաների դարաշրջանն արդեն սկսվել է, եւ դա անդառնալի գործընթաց է, որին ի վիճակի չէ դիմակայելու ո՛չ պետությունը, ո՛չ ծնողները, ո՛չ էլ ոչ կառավարական հատվածը:

Ի՞նչ օգուտ երեխաներին գլոբալ ցանցից

Ճիշտ օգտագործման դեպքում համացանցը զգալիորեն փոխում է այն երեխաների կյանքը, որոնք խտրականության են ենթարկվում ռասայական, կրոնական, գենդերային կամ ազգային հատկանիշով, ապրում են աղքատության մեջ, բռնի տեղահանված անձինք են, սահմանափակ կարողություններով անձինք են կամ ապրում են աշխարհագրորեն դժվար հասանելի վայրում: Թվային տեխնոլոգիաների շնորհիվ՝ այդպիսի երեխաները կարող են իրենց աշխարհի մի մաս զգալ:

Այդ պատճառով էլ համացանցից օգտվելու հնարավորություն պետք է ունենան բոլոր երեխաները, քանի որ դրանից զրկված երեխաները մյուսների հետ անհավասար պայմաններում են գտնվում:

Վտանգները, որոնք սպառնում են երեխաներին գլոբալ ցանցում

«Բազում բարիքներին զուգահեռ, համացանցը նաեւ բազում վտանգներ է պարունակում»,- նախազգուշացնում են հաշվետվության հեղինակները:

Համացանցում չարագործները հեշտությամբ երեխաների հետ կապ են հաստատում՝ անանուն էջի միջոցով, նրանց մոտ որեւէ կասկածներ չառաջացնելով: Նրանք երեխաներին սեռական կապ կամ այլ վտանգավոր կապեր են պարտադրում: Հաճախ գրանցվում են երեխաների ծայրահեղացման կամ անառողջ եւ վտանգավոր արարքների դրդելու փորձեր:

Բացի այդ, համացանցում երեխաներին հեշտությամբ կարող են հանդիպել նյութեր, որոնց բովանդակությունը կարող է վնաս հասցնել նրանց չամրապնդված հոգեկանին: Դրանք կարող են լինել սեռական, պոռնկագրական բնույթի լուսանկարներ եւ տեսագրություններ, որոնք բռնության տեսարաններ են պարունակում, անցանկալի գովազդ, ռասիստական կամ այլ խտրական հայտարարություններ, անառողջ գործողություններ, օրինակ, ինքնախարազանում կամ անորեքսիա խրախուսող գործողություններ կամ անգամ՝ ինքնասպանության դրդող կայքեր:

Ի՞նչ է արվում, անվտանգության ապահովման համար, Վրաստանում

Վրաստանում կանոնակարգ է գործում, որը պաշտպանում է սպառողների իրավունքներն ու օրինական շահերը հաղորդակցության ոլորտում: Կանոնակարգի համաձայն՝ համացանցի փրովայդերները, վեբ-կայքերի սեփականատերերը պարտավոր են օգտատերերին պաշտպանել «վնասակար տեղեկատվության ստացումից»:

Սակայն, իրականում, այդ կարգավորումը փաստացի չի աշխատում: Այսօր Վրաստանում համացանցից օգտվող երեխաները ոչ մի կերպ պաշտպանված չեն գլոբալ ցանցի վտանգներից: Երկրի խորհրդարանը նոր օրինագիծ է մշակում՝ համացանցային տիրույթը վտանգ ներկայացնող տեղեկատվությունից պաշտպանելու համար:

Սակայն շատերը նման կարգավորումներին թերահավատորեն են վերաբերվում, քանի որ թույլ ժողովրդավարություն ունեցող երկրներում, ինչպիսին է Վրաստանը, այդպիսի սահմանափակումները կարող են առիթ դառնալ խոսքի ազատության սահմանափակման, գրաքննության կիրառման համար:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Բոլորն այժմ կարդալ գիտեն, ուրեմն՝ փառք «Կարդացածը հասկացողին...»:

Պ.ՍԵՎԱԿ
(1924-1971)
Հայ ականավոր բանաստեղծ

Ինքն իրենից դժգոհությունը խելացի կյանքի անհրաժեշտ պայմանն է: Միայն այս անբավականությունն է մարդուն մղում ինքնակատարելագործման:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ
(1828-1910)
Ռուս գրող

Ամենալավ բարձը մաքուր խիղճն է...

Հ.ԻԲՍԵՆ
(1828-1906)
Նորվեգացի դրամատուրգ

Ապրում ես, ըստ էության, այն ժամանակ, երբ օգտվում ես ուրիշների բարեհաճությունից:

Ի.ԳՅՈԹԵ
(1749-1832)
Գերմանացի քնարերգու

Մարդկանց փոխելու համար՝ հարկավոր է սիրել նրանց: Նրանց վրա ներգործելը համամասնական է նրանց նկատմամբ սիրուն:

Ի.ՊԵՍՏԱԼՈՑԻ
(1746-1827)
Շվեյցարացի մանկավարժ

Եթե քո գլուխն այնքան են լցնում՝ ինչպես են քեզ արձան կանգնեցրել, ուրեմն, դու արդեն մեծություն ես քո կենդանության օրոք:

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱԶԴԱՐԱՐՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս նպատակին հասնելու համար առանցքային նշանակություն ունեն՝ Հայաստանի արտաքին եւ ներքին անվտանգության ապահովումը, Արցախի անվտանգության երաշխավորումը եւ շարունակական ամրապնդումը. մարդու իրավունքների պաշտպանվածությունը, ժողովրդավարությունը, ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը, իրավունքի գերակայությունը, հայության մարդկային, տնտեսական, ֆինանսական, մտավոր ներուժի՝ Հայաստանի զարգացման նպատակի շուրջ համախմբումը:

Որպես առաջնահերթություններ ծրագրում նշված են նաեւ երկրի կառավարության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, կոռուպցիայի հանրային մերժումը եւ կոռուպցիայից զերծ հանրությունը, քաղաքականության եւ բիզնեսի գործնական տարանջատումը, տնտեսական գործունեության համընդհանուր հասանելիությունը, ներդրումային միջավայրի գրավչությունը, աշխատանքի եւ ներդրումների քաջալերումը, կրթության եւ առողջապահական ոլորտի քաջալերումը, աղքատության հաղթահարումը՝ աշխատանքի եւ կրթության միջոցով, պետական ծախսերի եւ գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

Առաջնահերթություններին զուգընթաց, ծրագրում թվարկված են նաեւ կառավարության խնդիրները:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի համոզմամբ՝ երկրի կառավարության ծրագրի հաստատմամբ երկրում սկսվում է տնտեսական հեղափոխության փուլը:

- Մեր հայեցակարգային պատկերացման համար անկյունաքարային նշանակություն ունի հետեւյալը. մենք հռչակել ենք տնտեսական հեղափոխության հայեցակարգը, այս ծրագրով ազդարարում ենք տնտեսական հեղափոխության մեկնարկը՝ արձանագրելով, որ կառավարության գործառույթը շարունակում է մնալ նույնպիսին, ինչպիսին Հայաստանում ոչ բռնի, թավշյա հեղափոխության գործառույթը՝ այն է՝ ստեղծել հնարավորություններ: Կառավարությունն իրեն համարում է այս գործընթացի կարեւոր մասնակիցներից մեկը եւ պատրաստ է իր քայլերով քաղաքացիներին քաջալերել, որպեսզի նրանք օգտվեն այդ հնարավորություններից,- կառավարության նիստում հայտարարեց ՀՀ վարչապետը:

Նրա խոսքով՝ մարդիկ պետք է հնարավորություն ունենան տեսնել, շոշափել այդ հնարավորությունները, որոնք կառավարությունը պետք է ապահովի կիրառման համապատասխան գործիքակազմով:

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ ՓԱԿՎԵՑԻՆ

Հայաստանի կառավարության որոշմամբ՝ պետական գերատեսչությունների բոլոր արտաբյուջետային հաշիվները կդադարեն գործել: Այդ մասին ասաց Հայաստանի ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանը:

- Կան մարմիններ, որոնք ունեն արտաբյուջեներ, կան մարմիններ, որոնք չունեն: Հիմա նպատակն է, որպեսզի ունենանք միասնական մոտեցում: Շրջանառության մեջ է դրվել օրենսդրական փաթեթ, որով կդադարեցվի արտաբյուջետային հաշիվներով շրջանառությունը, ինչը նշանակում է, որ մենք գնում ենք եղած միջոցների համախմբման՝ ոչ միայն ֆինանսական, այլեւ այլ ռեսուրսների,- ասաց Ջանջուղազյանը:

Նրա խոսքով՝ այդ մոտեցումը տարածվելու է նաեւ ուժային կառույցների վրա: Ըստ նախարարի՝ միայն արտաբյուջեների մասով, պետբյուջեից տարեկան հատկացվում է 29 մլրդ դրամ: «Նախագծերի փաթեթը շրջանառվում է, կառավարության առաջիկա նիստերից մեկում այն կընդունվի եւ կուղարկվի ԱԺ: Ընթացիկ տարվա վրա որոշումը չի ազդի, այլ կգործվի 2020 թվականի հունվարի 1-ից»,- նշեց Ջանջուղազյանը:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՆՈՐ ԿԱՄՐՋԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղական համայնքում կազմակերպվել էին հանրային լսումներ՝ նվիրված Հայաստան-Վրաստան պետական սահմանի անցակետում՝ Դեբեդ գետի վրա նոր կամրջի նախագծման եւ շինարարական աշխատանքներին:

Լսումներին ներկա են եղել Բագրատաշենի բնակիչներ, ծրագրի պատվիրատու կողմերի՝ Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի, Վրաստանի ճանապարհային դեպարտամենտի աշխատակիցներ, կամրջի նախագծման եւ շինարարական աշխատանքների մրցույթը շահած իրանական Tunnel Sadd Ariana ընկերության, շինաշխատանքների ինժեներական ծառայություններ մատուցող Soosung Engineering Co., Ltd. կազմակերպության ներկայացուցիչներ:

Քննարկման հիմնական նպատակն էր շահագրգիռ կողմերին, համայնքի բնակչությանը, գործընկերներին ներկայացնել տվյալներ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ, ինչպես նաեւ՝ հաղորդել նախագծային ցուցանիշների մասին տեղեկատվություն: Tunnel Sadd Ariana ընկերության մասնագետները մանրամասն ներկայացրին ծրագիրը, շեշտադրումներ կատարվեցին բնապահպանական եւ սոցիալական հարցերի վրա, խոսվեց նախագծային՝՝ այս պահին առկա ցուցանիշների մասին:

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Նախորդ տարի Հայաստան է ներմուծվել 67 հազար 255, 2017 թվականին՝ 39 հազար 282, իսկ 2016-ին՝ 16 հազար 887 ավտոմեքենա: Հիմնականում ավտոմեքենաները ներմուծվել են Վրաստանից, ԱՄՆ-ից եւ Ճապոնիայից, որոնց ծագման երկրներն են Գերմանիան, Ճապոնիան, ԱՄՆ-ը եւ Կորեան:

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանն անդրադարձավ երկու եւ ավելի ավտոմեքենա ներկրողների դժգոհություններին, որոնք կապված էին հարկային դրույքաչափերի բարձր լինելու հետ: Նա նշեց, որ, իրենց խոստմանը համապատասխան, արդեն լուծումներ են առաջարկել:

- Ավտոմեքենաների ներկրմամբ զբաղվող մեր հայրենակիցները բողոքում էին, մեզ հորդորում էին, որ մենք օրենսդրությունը փոխենք: Մենք խոստացանք քննարկում անցնել: Ստացված առաջարկի հիման վրա՝ ՊԵԿ-ի տեսակետը ներկայացրեցինք կառավարությանը, որտեղ քննարկումների արդյունքում վերջնականացվեց երկու տարբերակ: Մոտ օրերս բարեփոխումների շրջանակում մենք այդ տարբերակը ներմուծելու ենք փոփոխությունների փաթեթում: Այն գործելու է հետընթաց, այսինքն՝ 2018 թվականի հուլիսի 1-ից,- ասաց Դավիթ Անանյանը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ՄՆՈՒՄ Է ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Հայաստանի վերաքննիչ դատարանը մերժեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտպանների բողոքները, խափանման միջոցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը թողեց անփոփոխ. Քոչարյանը կմնա կալանքի տակ:

Հիշեցնենք, որ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը հունվարի 18-ին որոշում էր կայացրել՝ բավարարել Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գործով վարույթ իրականացնող մարմնի միջնորդությունը՝ կալանքը երկու ամսով երկարաձգելու վերաբերյալ: Քոչարյանի պաշտպանները բողոք էին ներկայացրել առաջին ատյանի դատարանի՝ հունվարի 18-ի որոշման դեմ, որով բավարարվել է Հատուկ քննչական ծառայության քննիչի միջնորդությունը՝ Ռոբերտ Քոչարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ եւ մերժվել՝ պաշտպանների միջնորդությունը Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին:

2008 թվականի մարտի 1-2-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քրեական գործով՝ Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ տապալել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ

Գործադիրն ավարտել է Հայաստանի կառավարության նոր կառուցվածքի շուրջ քննարկումները: Այդ մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրառում է կատարել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Վերջնականորեն ավարտեցինք Հայաստանի կառավարության կառուցվածքի քննարկումները: Կլինի 12 նախարարություն: Վարչապետի աշխատակազմում կստեղծվի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոն, ով կլինի վարչապետի ներկայացուցիչը Սփյուռքի հետ հարաբերություններում եւ վարչապետի անունից կհամակարգի կառավարության աշխատանքները սփյուռքի հետ հարաբերություններում»,- գրել է ՀՀ վարչապետը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ երկրում տեղի ունեցած հեղափոխությանը հաջորդած ամիսների ընթացքում գրանցված կարեւորագույն նվաճումներից է համարում այն, որ Հայաստանն այժմ ժողովրդավարական երկիր է: Այս մասին նա ասել է Deutsche Welle-ի ռուսական ծառայությանը տված հարցազրույցում:

- Ամենակարեւոր նվաճումն այն է, որ հիմա Հայաստանը ժողովրդավարական երկիր է: Հայաստանից արմատախիլ է արվել համակարգային կոռուպցիան, երկրում չկա տնտեսական մենաշնորհ: Բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ,- ասել է Փաշինյանը:

Անդրադառնալով Մարտի 1-ի գործով դատավարությանը, որտեղ որպես մեղադրյալ է ներգրավված Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, վարչապետը նշեց, որ քննությունն ընթացքի մեջ է: «Քրեական գործի քննությունը շարունակվում է: Թե ինչի այն կհանգեցնի, չեմ կարող ասել»,- ասել է վարչապետ Փաշինյանը:

«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ԾՐԱԳՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԵՌԱՊԱՏԿՎՈՒՄ Է

Աշխատանքներ են տարվում՝ հյուսիս-հարավ ավտոմայրուղու առաջին եւ երկրորդ տրանշներով նախատեսված շինարարական աշխատանքները նախատեսված ժամկետներում ավարտելու համար: Այդ մասին, կառավարության նիստից հետո, նշեց Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Հակոբ Արշակյանը:

«Այն ծավալները, որոնցով առաջ էին գնում աշխատանքները, մեր գործուն ջանքերի շնորհիվ, եռապատկվել են: Ի սկզբանե աշխատանքները շատ դանդաղ էին ընթացել, եւ պրոցեսը հետ էր ընկել մինչեւ կառավարության փոփոխությունը»,- ասաց նա:

ԱՊՐԻԼԻ 24-Ը՝ ՖՐԱՆՍԻԱՆ ՀՌՉԱԿԵՑ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն ապրիլի 24-ը հայտարարել է Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր: Այս մասին նա հայտարարեց Փարիզում հայ համայնքի ամենամյա ընթրիքի ժամանակ: «Ֆրանսիան գիտի, թե ինչպես առերեսվել պատմությանը: Այն առաջիններից էր, որ 1915թ. հայ ժողովրդի զանգվածային սպանություններն անվանեց ցեղասպություն – 2001թ. ճանաչեց օրենքի ուժով»,- ասաց Ֆրանսիայի նախագահը:

Նա ավելացրել է, որ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակելու գործընթացն ավարտին կհասցվի առաջիկա շաբաթների ընթացքում:

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի հրավիրած ընթրիքին Մակրոնը նաեւ հարգանքի տուրք մատուցեց աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի հիշատակին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐ



10.02.2019. Բարեկենդան Առաջավորաց Պահոց

Հատուկ է միայն Հայ Եկեղեցուն: Սկսվում է Մեծ Պահքից 3 շաբաթ առաջ: Պահանջվում է խիստ պահեցողություն: Հնում, այդ օրերին թույլատրվել է միայն աղ ու հաց ուտել, արգելվել է սուրբ պատարագ մատուցել: Առաջավորաց Պահքի խորհուրդը՝ հեթանոսական ապականությունից մարդկային 5 զգայարանների սրբումն է:

14.02.2019. Տեառնընդառաջ: Տոն քառասնօրյա Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Տեառնընդառաջը կամ 40-օրական Հիսուսի ընծայումը տաճարին տոնում է Աստվածահայտնությունից 40 օր հետո՝ փետրվարի 14-ին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ, արդեն մի քանի տարի է, ինչ, Տեառնընդառաջի պատարագից հետո, հայոց եկեղեցիներում տեղի է ունենում նորապսակների օրհնության կարգ:

15.02.2019. Հովնան մարգարեի հիշատակության օր

16.02.2019. Երիտասարդների եւ սիրո բարեխոս Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության օր

Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինությամբ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր:

Սբ.Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սբ.Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սբ.Սարգիսը սիրո երազանքն իրականացնող Սուրբ է: Սբ. Սարգսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան:

Սբ.Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է՝ փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սբ.Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Տոնի առթիվ՝ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում: Տոնի օրը, Սբ.Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում, մատուցվում է սուրբ պատարագ, որից հետո՝ կատարվում երիտասարդների օրհնության կարգ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԻՆՈ ԶԱՄԲԱԽԻՋԵԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Վաշինգտոնում, Օվալային առանձնասենյակում, ընդունեց Վրաստանի ֆերմերների ասոցիացիայի ղեկավար Նինո Զամբախիձեին եւ աշխարհի տարբեր երկրներից ժամանած լիդեր-կանանց:

Նինո Զամբախիձեին բախտ վիճակվեց Սպիտակ տանը ներկա գտնվել Կանանց զարգացման եւ բարգավաճման գլոբալ նախաձեռնության մեկնարկի արարողությանը: Առաջիկա վեց տարիների ընթացքում, այդ ծրագրով օգնություն կցուցաբերվի շուրջ 50 միլիոն կանանց:

- Ես նրանցից մեկն էի, որ համարում էի, որ Վրաստանում կինը ապագա չունի: Ինձ համար բեկումնային դարձավ այն պահը, երբ «Հազարամյակի մարտահրավերը» ինձ հնարավորություն ընձեռեց հաղթահարելու այդ արգելագիծը: Իմ գործունեությունը սկսեցի, ունենալով երկու կով, իսկ հիմա ես Վրաստանի խոշորագույն ֆերմերներից մեկն եմ: Հիմա հասարակությանը աջակցություն եմ ցուցաբերում ֆինանսների, կրթության մատչելիության, բարեկեցության ապահովման հարցում,- հայտարարեց Նինո Զամբախիձեն եւ հավելեց, որ իր պատմությունը ԱՄՆ-ի եւ Վրաստանի միջեւ սերտ հարաբերությունների հիանալի օրինակ է:

Նշենք, որ Նինո Զամբախիձեի անունը քաջ ծանոթ է Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի ֆերմերներին, ովքեր սերտորեն համագործակցում են նրա հետ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍԸ ԲԱՑ Է

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ճանապարհային դեպարտամենտի տեղեկատվության համաձայն, փետրվարի 8-ի դրությամբ, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է տրանսպորտային բոլոր միջոցների համար:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՀԵՆՐԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Ծանր կորուստ կրեց Ծալկայի մունիցիպալիտետի Ղզլքիլիսայի հանրային դպրոցը: Կյանքից հեռացավ վաստակաշատ մանկավարժը՝ Հենրիկ Մամիկոնի ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ:

Հ.Միքայելյանը ծնվել է 1940 թվականին, սովորել է Ղզլքիլիսայի ութամյա, այնուհետեւ՝ Ղուշչիի միջնակարգ դպրոցում: Ապա ավարտել է Երեւանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

Բանակում ծառայելուց հետո, վերադարձել է Ղզլքիլիսա եւ տեղի դպրոցում՝ մինչեւ իր կյանքի վերջին օրերը, անընդմեջ դասավանդել է ֆիզիկա եւ մաթեմատիկա:

Սրտաբաց անձնավորություն էր Միքայելյանը՝ իր գործընկերների, աշակերտների համար, հոգատար՝ գյուղացիների նկատմամբ ու մարդամոտ:

2003 թվականին, կրթության նախարարության կողմից, նրան շնորհվել է ավագ ուսուցիչ-մեթոդիստի կոչում, իսկ աշխատանքային երկարամյա գործունեության համար՝ պարգեւատրվել է մեդալներով, պատվոգրերով, շնորհակալագրերով:

Գնաս բարով, հարգարժան գործընկեր: Որտեղ էլ լինենք, ի լուր աշխարհի, կհայտարարենք, որ մենք քո սաներն ենք, քո գործընկերները, քո հավերժական բարեկամները:

ՂԶԼՔԻԼԻՍԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿՈԼԵԿՏԻՎ

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼ. ՖԻՖԱ-Ն ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ընթացիկ տարվա ազգային հավաքականների վարկանիշային անդրանիկ աղյուսակը: Ըստ նոր դասակարգման՝ Վրաստանի հավաքականը, նոխորդ աղյուսակի համեմատությամբ, իր դիրքերը զիջել է երկու հորիզոնականով եւ ներկայումս զբաղեցնում է 91-րդ տեղը: Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա այն պահպանել է իր տեղը եւ զբաղեցնում է 101-րդ հորիզոնականը:

Աղյուսակը գլխավորում է Բելգիայի հավաքականը, երկրորդ տեղում է Ֆրանսիան, երրորդ հորիզոնականում Բրազիլիան է:

Լավագույն տասնյակում են նաեւ Խորվաթիան, Անգլիան, Պորտուգալիան, Ուրուգվայը, Շվեյցարիան, Իսպանիան եւ Դանիան:

ԸՄԲՇԱՄԱՐՏ. ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՑ

Թուրքիայում եզրագիծը հատեց հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարը:

Մրցումներին մասնակից Վրաստանի հավաքականը իր ակտիվում գրանցեց տարբեր արժողության վեց մեդալ (մեկ ոսկե, մեկ արծաթե եւ չորս բրոնզե):

Մրցաշարում հաղթող դարձավ Լեւան Քավթարաձեն (63 կգ), Դեմուր Քավթարաձեն (77 կգ) զբաղեցրեց երկրորդ տեղը, իսկ Զուրաբ Մաճարաշվիլին (55 կգ), Գիորգի Մելիան (97 կգ), Սաչինո Դավիթաիան (67 կգ) եւ Շալվա Խաչիձեն (87 կգ) արժանացան բրոնզե մեդալի:

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Լեհ արկածային գրող: 3.Նահանգ Պատմական Հայաստանում: 6.Աշխատանքի եւ ուժի միավորը: 8.Եռանկյունաչափական ֆունկցիա: 10.Հանրակառք՝ շատ տեղանոց ձիակառք: 11.Քիմիական տարր, հալոգեն: 12.Ագռավների ցեղի թռչուն: 13.Որոշ արաբական երկրների դրամը: 17.Հին հունական դիցուհի, իմաստության եւ կազմակերպված պատերազմի աստվածուհի: 19.Անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ: 20.Լուսավորելու մեծ մոմ, ջահ: 21.Նորվեգացի բեւեռախույզ: 22.Պիտակ, գործարանադրոշմ: 23.Անմիջապես մարմնի վրա հագնելու զգեստ: 25.Հեքիաթի հերոս: 26.Երկսայրի, կարճ կոթով մեծ դանակ: 29.Առասպելական փոքրահասակ մարդուկ: 30.Ջրանցույց կամուրջ: 31.Շրջկենտրոն՝ Վրաստանում: 34.Արքայական ակնակուռ մական: 35.Որեւէ գրվածքից մեջբերված հատված: 37.Ամանի, կաթսայի բռնակ: 38.Գերաններից պատրաստված լաստանավի տեսակ: 39.Սպորտաձեւ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Լատվիայի դրամական միավորը: 2.Իտալական լարային երաժշտական գործիք: 3.Կաշվե անկրունկ ոտնաման: 4.Որեւէ գրվածքի սկզբում դրվող թեւավոր խոսք կամ մեջբերում: 5.Վրաստանում քրիստոնեություն տարածած կույս: 6.Մարդու կամ կենդանու սաղմ: 7.Երկար մազ, վարս: 9.Անկարգ, սրիկա: 10.Ամեն մի օր: 11.Գերմանացի ֆիզիկոս, ջերմաստիճանային սանդղակի հեղինակ: 14.Ֆրանսիացի գրող: 15.Արվեստի եւ գրականության հովանավոր անձ: 16.Հնում տղամարդու եւ կանանց երկարափեշ հագուստ: 18.Ավտոմեքենայի թափքի տեսակ: 19.Խոշոր եւ պայծառ գիսաստղ: 23.Ռուս գեղանկարիչ: 24.Կահկարասի: 25.Արեգակի մոլորակներից: 27.Քաղաք՝ Մեծ Բրիտանիայում: 28.Քիմիական տարր, իներտ գազ: 32.Դրամ պահելու փոքր տոպրակ: 33.Հեռավորության չափման միավոր: 34.Աֆրիկյան այծյամի տեսակ: 36.Հաստ ցողունով թթու դնելու բանջարեղեն:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ադամաթուզ: 6.Մարկոս: 10.Մոկաց: 11.Կրետե: 12.Ստահոդ: 15.Գանա: 17.Տեկիլա: 18.Իզուր: 20.Նա: 21.Կարո: 22.Իբսեն: 23.Ոչ: 25.Դեր: 26.Վիզ: 27.Երամ: 28.Տո: 30.Դաս: 32.Հանք: 34.Իմ: 37.Եգեր: 40.Արազ: 42.Աքա: 43.Այս: 44.Նեմրա: 45.Կենաց: 47.Ավան: 48.Անա: 50.Սոսկ: 51.Հորդ: 53.Ատր: 54.Իսահակ: 56.Դոն: 59.Տոննա: 60.Իշատեր: 61.Ցամաք: 62.Ֆրիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ասկանիո: 2.Ավետիս: 3.Արեգունի: 4.Ում: 5.Ջոքանչ: 6.Մաստ: 7.Ացտեկ: 8.Կահիրե: 9.Սեդա: 13.Ակադեմիա: 14.Ոլորտ: 16.Ար: 19.Ձեւս: 24.Արքիմեդ: 27.Են: 29.Ոդիսական: 31.Ադանա: 32.Հեթանոս: 33.Արա: 35.Մնացորդ: 36.Տաբածղուրի: 38.Գարահիսար: 41.Ձենոբ: 46.Աստ: 49.Արատ: 52.Դհոլչի: 53.Ակնոց: 55.Ան: 57.Որքան: 58.Աբաս:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445